



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՄԵԾ ՊԱՅՔԻ ԾՐՋԱՆԻՆ ԱՐԵՄԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Կիրակի, 6 Մարտը, մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Բուն Բարեկենդան է:

Այս տարի, Ս. Յարութեան տօնը կանխող Մեծ Պահոց քառասուրեայ շրջանը կը սկսի Երկուշաբթի, 7 Մարտին:

Մեծ Պահոց շրջանին, թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններ, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Չորեքշաբթի, 9 Մարտին, թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Արեւագալի առաջին արարողութեան: Սրբազան Հօր պիտի ընկերանան թեմիս մէջ ծառայող միաբան եւ քահանայ հայրերը:

Ժամերգութեան ներկայ պիտի ըլլան Ֆերահեան Ազգ. Վարժարանի աշակերտները: Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն պիտի խօսի մեծ պահոց մասին:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ կից, «Տիգրանեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Էնսինոյի ՀՕՄԻ «Անահիտ» Մասնաճիւղի Մեծ Պահոցի ճաշկերոյթը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ճաշկերոյթին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը:

### GREAT LENT SUNRISE AND VESPER SERVICES

According to the Armenian Church calendar, Sunday, March 6<sup>th</sup>, 2011, is the eve of Great Lent.

Great Lent begins on Monday, March 7<sup>th</sup>. During the 40-day period, sunrise and vesper services will take place in all Prelacy churches on Wednesdays and Fridays.

On Wednesday, March 9<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the first sunrise service at Holy Martyrs Church in Encino and will deliver his message on Great Lent to Ferrahian School students who will be in attendance.

Following the service, a Great Lent luncheon organized by the ARS "Anahid" Chapter will take place at "Dikranian" Hall. The Prelate will attend and convey his blessings.

\*\*\*

## **ԳԵՐՊ. Տ. ՄԻՒՌՆ Ծ. ՎՐԴ. ԱԶՆԻԿԵԱՆԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 30ԱՄԵԱԿ**

Կազմակերպութեամբ Նորթ Յոլիվուտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգաբարձութեան, Ուրբաթ, 4 Մարտին, երեկոյեան ժամը 8-ին, ի պատիւ եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի, անոր 30-ամեայ հոգեւոր ծառայութեան առիթով, գնահատանքի եւ երախտագիտութեան ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու նախագահութիւնը:

Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

## **RECEPTION IN HONOR OF THE 30<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE ORDINATION OF VERY REV. FR. MURON AZNIKIAN**

The Armenian Apostolic Church of North Hollywood has organized a dinner reception in honor of the 30<sup>th</sup> anniversary of the ordination of Very Rev. Fr. Muron Aznikian into the priesthood.

The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on Friday, March 4<sup>th</sup>, at 8:00 p.m., at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale.

\*\*\*

## **ԶԱԲԱՆՔԻ Ի ՆՊԱՍՏ ՀՕՄ-Ի ԱԲԱՆԴԱԿԱՆ ՆԱԲԱՊՏՈՅՏ**

Կիրակի, 6 Մարտի յետմիջօրէին, ՀՕՄ-ի Զաւախք Հիմնադրամի յանձնախումբին կազմակերպած ընթրիք-երեկոն տեղի պիտի ունենայ «Electra Crystal» սաւուն վրայ, Newport Beach: Ձեռնարկի պատուոյ հիւրերն են ծանօթ բարերարներ՝ Տիար եւ Տիկին Յակոբ եւ Մինա Շիրվանեանները:

Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, իբրեւ Առաջնորդ Սրբազանի ներկայացուցիչը, պիտի ընդառաջէ հրաւերին:

## **A.R.S. JAVAKHK FUND COMMITTEE ANNUAL GALA DINNER**

On Sunday, March 6<sup>th</sup>, the annual gala dinner of the A.R.S. Javakhk Fund Committee will take place aboard the Electra "Crystal" Yacht in Newport Beach. This year's honored guests are Mr. and Mrs. Hacop and Mina Shirvanian.

Very Rev. Fr. Barthev Gulumian will attend and convey the Prelate's blessings on this occasion.

\*\*\*

### **«ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ**

Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող «Նոր Զուղայի Բարեկամներ» յանձնախումբի տարեկան մշակութային ձեռնարկը՝ հայկական զգեստներու տարազահանդես մը, տեղի պիտի ունենայ Շաբաթ, 5 Մարտի երեկոյեան, Կլենտէյլի Ambrosia ճաշարանին մէջ:

Տարազահանդեսը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքը: Զայր Սուրբին կ'ընկերանայ Արժ. Տ. Կոմիտաս Բիւյ. Թորոսեան:

### **"FRIENDS OF NEW JULFA" TRADITIONAL COSTUME FESTIVAL**

The annual traditional costume festival of the "Friends of New Julfa" Committee will be held under the auspices of the Prelate on Saturday, March 5<sup>th</sup>, at Ambrosia Restaurant in Glendale.

Very Rev. Fr. Muron Aznikian will attend and convey the Prelate's message. He will be accompanied by Rev. Fr. Gomidas Torossian.

\*\*\*

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՕԹՔԻ ՕՐՈՒՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ**

Ուրբաթ, 4 Մարտը Կանանց Համաշխարհային Աղօթքի Օրն է:

Այս առիթով, հաւաքական աղօթքի յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, «Քանի՞ Նկանակ Ունիք» բնաբանով:



Առաջնորդ Սրբազան  
 Զայրը ներկայ եղաւ  
 արարողութեան,  
 փոխանցեց իր  
 օրհնութիւնները եւ  
 կատարեց փակման  
 աղօթքը: Առաջնորդ  
 Սրբազանին կ'ընկերանար  
 Արժ. Տ. Վազգէն Զիւյ.  
 Աթմաճեան:  
 Ներկայ էին  
 Արեւմտեան Թեմի  
 Առաջնորդ Բարձր. Տ.

Յովսէփ Մաթոսեան, Յովսէփ Մաթոսեան, Զայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Զոհ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեան, փոխ ժողովրդապետ Զոհ. Տ. Արմենակ Վրդ. Պետրոսեան, եւ Զայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Յովսէփ Մաթոսեան:

Յայտագիրը կազմուած էր աղօթքներով, հոգեւոր երգերով, Աստուածաշունչէն ընթերցումներով եւ յաւուր պատշաճի ու գնահատանքի խօսքերով:

## PRELATE PARTICIPATES IN WOMEN'S WORLD DAY OF PRAYER



On Friday, March 4<sup>th</sup>, women around the world will observe the Women's World Day of Prayer. Our local community also participates in this global movement, organizing an event each year on this day to bring together the faithful women of our community for prayer, fellowship, and praise.

This year's prayer service was held at St. Gregory Armenian Catholic

Church in Glendale with the theme, "How many loaves have you?"

The Prelate attended and offered his blessings and the benediction. He was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian.

H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, St. Gregory Church Rector Very Rev. Fr. Krikor Shahinian, Assistant Rector Very Rev. Fr. Armenag Bedrossian, and Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of N. America, participated in the prayer service.

\*\*\*

## ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԻԱՑԵԱԼ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ



Քրիստոնեության պահպանման ի խնդիր, պատմության մեջ տեղի ունեցած առաջին պատերազմին՝ 1560 տարի առաջ տեղի ունեցած Ս. Վարդանանց հերոսամարտի յիշատակին, Արեւմտեան մեր Թեմը եւս, Հայաստանէն մինչեւ արտերկրի գաղութներու ականդապահներուն պէս, այս տօնը յիշատակեց

եկեղեցական յատուկ արարողութիւններով ու Ս. Պատարագով:

Նախատօնակի արարողութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 2 Մարտի երեկոյեան, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ մասնակցութեամբ Թեմիս Հոգեւորականաց Դասուն: Այս առիթով իր արտասանած պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Ս. Վարդանի սխրագործութեան եւ օրուան խորհուրդը պատկերաւոր ձեւով բացատրելով, ըսաւ, որ այսօր, տարբեր մարգերու մէջ ականատես ու ականջալուր կ'ըլլանք հերոսներու, որոնք հմայք կը թողուն եւ կը սիրուին երիտասարդութեան կողմէ: Վարդան Մամիկոնեան եւ իր գինակիցները իրենց օրերու հերոսներն էին, իսկ Սպարապետ Մամիկոնեան՝ մեծագոյն հերոսը. ան քրիստոնեութեան ու ազգի հաւատարմութեան հերոսն էր, որուն յիշատկը կը պահպանենք ու կը տօնենք ամէն տարի. ան կը հանդիսանայ, պէ՛տք է ըլլայ մեր բոլորին տիպար հերոսը, մեր երիտասարդները պէտք է հետեւին անոր արիւթեան ու քաջութեան օրինակին ու զայն ընդունին իբրեւ մեծագոյն հերոս, իրենց կարգին ըլլան անոր նման հերոսներ: Միւս կողմէ, շարունակեց Առաջնորդ Սրբազանը, Աւարայրի ճակատամարտին, արձանագրուեցան նաեւ ազգադաւութեան, ուրացումի եւ դաւաճանութեան դէպքեր, որոնք կը յիշուին ցաւով: Ան թելադրեց հեռու մնալ նման ընթացքէ ու գօտեպնդուիլ Ս. Վարդանանց նահատակութեան ոգիով, մնալ ուխտապահ՝ հաւատքի ու հայրենիքի, որովհետեւ Վարդանանք Յազկերտի դէմ իրենց պատերազմը մղեցին Վասն Յիսուսի եւ Վասն Հայրենիքի նշանաբանով: «Այսպիսի հերոսութիւն պէտք է ներշնչենք մեր զաւակներուն, որպէսզի անոնք ըլլան Աւարայրի պատգամին ուխտապահները», շեշտեց Առաջնորդ Սրբազանը:

Նախատօնակի արարողութենէն ետք, երգուեցան Վարդանանց Հերոսամարտին նուիրուած շարականներ ու երգեր, իսկ եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը ներկաներուն համար կազմակերպած էր կոկիկ հիւրասիրութիւն:

Ս. Վարդանանց Տօնին առիթով, մեր վարժարաններն ու ազգային հաստատություններ արձակուրդի մէջ էին: Էնսիւնոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, երեկոյեան, տեղի ունեցաւ Ս. Պատարագ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազանին ու մասնակցութեամբ Թեմիս Յոգեւորականաց Դասուն: Պատարագիչն էր Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որ այս առիթով իր քարոզ-պատգամին մէջ կանգ առաւ Ս. Վարդանանց նահատակութեան խորհուրդին վրայ եւ անդրադարձաւ Աւարայրէն ճառագայթող բազմախորհրուրդ թելադրանքներուն: Ան նշեց, որ Աւարայրի օրերուն, Յազկերտն ու անոր բանակը երեւելի թշնամիներ էին, մինչդեռ այսօր, հաւատացեալներ կը կանգնին աներեւոյթ թշնամիներու դիմաց. իբրեւ օրինակ, ան նշեց, որ յատկապէս երիտասարդ սերունդները կը գտնուին արդի արիեստագիտութեան ու քարոզչական մեքենաներու վատ ազդեցութիւններուն տակ, նկատի ունենալով որ համակարգիչն ու ժապաւենները յաճախ կորսնցուցած են իրենց դաստիարակչական ու բարի ազդեցութիւնները ու անբաղձալի ներգործութիւն կ'ունենան զանոնք օգտագործողներու կեանքներուն վրայ: Ան մաղթեց, որ հաւատացեալներ Վարդանանց ոգիով զինուին ու դէմ կանգնին զիրենք ամէն օր թիրախ դարձնող այս աներեւոյթ թշնամիներուն:

Ս. Պատարագէն ետք, երգուեցան Վարդանանց Տօնին յատուկ երգեր:

## COMMEMORATING THE FEAST OF STS. VARTANANK



Thursday, March 3<sup>rd</sup>, 2011 was the Feast of Sts. Vartanank.

The eve of the Feast was observed on Wednesday, March 2<sup>nd</sup>, with evening services at St. Sarkis Church in Pasadena presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of clergy members.

The Prelate delivered the sermon, in which he exalted the courage and heroism of St. Vartan. He stated that St. Vartan and his soldiers were champions of our faith and remain our heroes today, and we must follow in their example by remaining unwavering in our allegiance to our Christian faith and national values. The Prelate, noting that during the battle at Avarayr there was sadly betrayal and the renunciation of faith and nation by some, urged the faithful to not follow in that same path but rather be armed by the spirit of the martyrdom of the Sts. Vartanank who gave their lives for love of God and love of nation.



On Thursday, March 3<sup>rd</sup>, the Feast of Sts. Vartanank was commemorated with Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino presided over by the Prelate and with the participation of clergy members. Very Rev. Fr. Barthev Gulumian celebrated Divine Liturgy and delivered the sermon.

In his sermon, Fr. Barthev reflected on the message that Vartanants brings to us today saying that in the days of Vartanants the enemy was known and visible, whereas today we are faced with a number of hidden or disguised enemies and challenges. Thus, he urged the faithful and especially the youth to arm themselves with the spirit of the Sts. Vartanank and stand firm in the face of adversity.

At the conclusion of both services, traditional songs dedicated to the Feast were sung, and the attendees were hosted to receptions hosted by the Ladies Auxiliaries of the respective parishes.

\*\*\*

## Ս. ՂԵՌՆՂԵԱՆՑ ՊԱՏԳԱՄԻՆ ՀԱԻՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ՝ Ս. ՊԱՏԱՐԱԳՈՎ



Մեր եկեղեցին ամեն տարի, Ս. Վարդանանց տօնի նախօրեակին, յատուկ արարողութիւններով կը տօնէ Ս. Ղեւոնդեանց տօնը, յիշատակելու համար հաւատքի, հայրենիքի ու ինքնուրոյնութեան համար Ե. դարու կեսերուն նահատակուած մեր հոգեւորականներու զոհաբերութիւնը: Այս տօնը ճանչցուած է նաեւ իբրեւ

հայ հոգեւորականներու եւ քահանաներու տօնը:

Այս առիթով, Երեքշաբթի, 1 Մարտի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն եւ ներկայութեամբ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներու ու մեծ թիւով հաւատացեալներու:

Ս. Պատարագը մատուցեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան. Ս. Սեղանի սպասարկութիւնը եւ արարողութեան բոլոր բաժինները կատարեցին հոգեւորականաց դասու անդամները, իսկ երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Միքայէլ Աւետիսեանի:

Պատարագիչ Հայր Սուրբը իր քարոզին մեջ կանգ առաւ Ս. Ղեւոնդեանց նահատակութեան իմաստին եւ անկէ բխած պատգամներուն վրայ: Ան առաջին հերթին շնորհաւորութեան խօսք ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, բոլոր հայ հոգեւորականներուն ու մեր Թեմին ծառայող հոգեւոր հայրերուն, որոնք կը հանդիսանան մեր հաւատքի ու հոգեւոր մշակոյթի ժառանգորդներն ու տարածիչները: Այնուհետեւ, ան անդրադարձաւ պատմական այն իրադարձութիւններուն, որոնց մեջ էր մեր ժողովուրդը՝ Ե. Դարու կեսերուն, երբ Հայաստանն ու Հայ ժողովուրդը կը կանգնէին պարտադիր ճուլումի ու ինքնութեան կորուստի մարտահրաւերին առջեւ: Ան յիշեցուց, որ Վարդանանց հերոսամարտէն ետք, հայոց կաթողիկոսը, Ղեւոնդ Երեց ու բազմաթիւ հոգեւորականներ գերի տարուեցան Պարսկաստան, անոնց պարտադրուեցան ուրանալ քրիստոնէութիւնը եւ ընդունիլ պարսից գրադաշտական կրօնը, սակայն հայ հոգեւորականները դեմ դրին այդ պարտադրանքին ու իրենց կեանքերով վճարեցին քրիստոնէութեան ու հայութեան հաւատարմութեան գինը, դարձան վկաներ ու արժանացան փառաց պսակին:

Արարողութեան աւարտին, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ յատկապէս մեր Թեմին ծառայած ու առյաւետ ննջած հոգեւորականներուն հոգիներուն համար: Պատարագիչ Հայր Սուրբը մէկ առ մէկ յիշատակեց անոնց անունները եւ խնդրեց հաւատացեալներէն, որ աղօթակից ըլլան, որպէսզի արժանի ըլլան երկնային արքայութեան:

Արարողութենէն ետք, հոգեւորականաց դասը երգեց Վարդանաց Նուիրուած հայրենասիրական երգեր: Երեկոն փակուեցաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա»ի, «Հայրապետական Մաղթանք»ի եւ Հայաստանի Զայլերգին խմբերգումով, մասնակցութեամբ հաւատացեալներուն ու երգչախումբին:

## DIVINE LITURGY IN OBSERVANCE OF THE FEAST OF STS. GHEVONTIANK



the sermon.

On Tuesday, March 1<sup>st</sup>, 2011, the Prelacy clergy order gathered at St. Mary's Church in Glendale to celebrate Divine Liturgy in observance of the Feast of Sts. Ghevontiank. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy, which was celebrated by Very Rev. Fr. Muron Aznikian, who also delivered



Given that the Feast of Sts. Ghevontiank is also a celebration of clergy, at the start of his sermon Fr. Muron expressed his thanks to H.H. Catholicos Aram I and all Armenian clergy members for their service to the Armenian church.

Fr. Muron then spoke of the historical circumstances facing the Armenian people in the 5<sup>th</sup> century and the challenges they faced with regards to preserving and practicing their faith. He reminded the faithful that after the battle of Vartanants, H.H. Catholicos Ghevont Yeretz and a number of clergy members were taken to Iran where they were forced to renounce their Christian faith and convert to Zoroastrianism, and how they were martyred after refusing to renounce their faith, thus becoming witnesses for our Christian faith. Fr. Muron also spoke of the calling and historical role of clergy, and how the mission for clergy remains the same today. "Armenian clergy have been and remain teachers, soldiers of God, preachers of peace, ambassadors for our heritage, and an advocate for the spiritual needs of their faithful", concluded Fr. Mruon.

At the conclusion of the Liturgy, requiem prayers were offered for the souls of departed clergy members who served within the Western Prelacy. Fr. Muron recalled the names of the departed clergy members and invited the faithful to join them in the prayers.

Following the requiem service, clergy members sang songs dedicated to the Feast of Sts. Vartanank, and the evening came to a close with the benediction by the Prelate and the singing of the Cilician and Pontifical anthems, and the Armenian national anthem.

\*\*\*

## ԱԶԳ. ՖԵՐԱՅԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 10ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Վերջին տարիներուն,  
յատկապէս Ազգ.  
Առաջնորդարանի նոր շէնքի  
կառուցման  
ամբողջացումէն ետք,  
գեղեցիկ աւանդութիւն մը  
սկսած է զարգանալ մեր  
Թեմին մէջ. աշակերտներ,  
իրենց ուսուցիչներուն եւ  
ծնողներու  
ընկերակցութեամբ,  
այցելութեան կու գան  
Ազգային Առաջնորդարան,

իրենց շնորհները կը հրամցնեն Առաջնորդ Սրբազանին ու զիրենց հիւրընկալող հոգեւոր հայրերու, պատգամներ կը լսեն ու գեղեցիկ

յիշատակներով կը վերադառնան դպրոց, իրենց հոգիներուն մէջ տեղ մը արձանագրելով ազգի ծառայութեան գաղափարն ու թելադրանքը:

Աւանդապահներու նորագոյն խումբը կազմեցին Ազգ. Ֆերահեան Երկդ. Վարժարանի 10րդ դասարանի աշակերտները, որոնք Չորեքշաբթի, 2 Մարտի առաւօտուն, առաջնորդութեամբ իրենց հայերէնի ուսուցիչին՝ Պրն. Արա Գազանճեանի եւ ընկերակցութեամբ այլ ուսուցչուհիներու ու ծնողական մարմինի ներկայացուցիչին, հասան Ազգ. Առաջնորդարան եւ մօտաւորապէս երկու ժամ հաճելի եւ օգտաշատ պահ մը բոլորեցին անոր յարկին տակ: Անոնք դիմաւորուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեանի եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի կողմէ:

Աշակերտները առաջին հերթին առաջնորդուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռ, ուր ունեցան աղօթքի պահ մը: Ուշագրաւ զուգահիսութեամբ մը, այս այցելութիւնը տեղի կ'ունենար Ս. Վարդանանց տօնի նախօրեակին, ու բնականաբար հանդիպումը ընդհանուր առմամբ անցաւ այս տօնի խորհուրդին մթնոլորտին մէջ: Տէրունական Աղօթքին կողքին, երգուեցան Ս. Վարդանանց տօնին նուիրուած շարականներ:

Այնուհետեւ, խումբը ուղղուեցաւ «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահ: Երկու աշակերտներ դաշնակի վրայ նուագեցին մէկական կտոր, ապա, Հայր Պարթեւ դասախօսութիւն մը տուաւ տօնին մասին:

Ապա խօսք առաւ Առաջնորդ Սրբազանը, որ անդրադարձաւ Վարդան Մամիկոնեանի, Ղեւոնդ Երեցի ու գինակիցներուն հերոսական կեցուածքին, նահատակութեան գնով հաւատքին ու հայրենիքին հաւատարիմ մնալու անոնց նուիրաբերումին եւ անոնց թողած անժամանցելի պատգամներուն: Ան թելադրեց ոչ միայն ծանօթանալ մեր անցեալի ու ներկայի արժէքներուն, մեր պատմութենէն հասնող պատգամներուն, այլ նաեւ իրենց կեանքներուն մէջ պահպանել մեր սրբազան նահատակներուն ու հերոսներուն հաւատարմութիւնը:

Աշակերտները ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն, ապա Առաջնորդ Սրբազանին ու Յոգեւոր Հայրերուն շուրջ խմբուեցան Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ, վայելելով կոկիկ հիւրասիրութիւն եւ արժանանալով յուշանուէրներու: Առաջնորդ Սրբազանը հակիրճ տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան ու անոր հովանիին տակ գործող եկեղեցիներուն ու դպրոցներուն մասին, նկատել տալով, որ իրենց դպրոցը՝ Ֆերահեան վարժարանը եւս մաս կը կազմէ մեր կրթական համացանցին: Աշակերտները ունէին հարցումներ, որոնց պատասխանեց Առաջնորդ Սրբազանը եւ տուաւ յաւելեալ լուսաբանութիւններ:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց աշակերտներուն եւ ընկերակիցներուն. յուշանուէրը Նոր Կտակարանն ու Սաղմոսագիրքը մէկտեղող հատոր մըն էր. Առաջնորդ Սրբազանը յանձնարարեց, որ աշակերտները առօրեայ ընթերցումներով հարստացնեն իրենց հոգիները: Աշակերտները խոստացան կատարել ընթերցումները:

Մեկնելէ առաջ, աշակերտները Առաջնորդարանի մուտքին ունեցան խմբանկար մը եւ երգեցին Յայաստանի Զայլերգը:

## FERRAHIAN SCHOOL 10<sup>TH</sup> GRADE STUDENTS VISIT THE PRELACY



On the morning of Wednesday, March 2<sup>nd</sup>, 2011, Ferrahian School tenth grade students visited the Prelacy, accompanied by Armenian teacher Mr. Ara Kazanjian and parents.

Upon their arrival, the students were escorted to the ՔՏ. Dertad and St. AshkhenՄ Chapel where H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, led a prayer service in which Very

Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian participated. Given that the visit coincided with the eve of Sts. Vartanank, songs dedicated to the Feast were also sung.

The students then headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where two students performed pieces on the piano, after which Fr. Barthev lectured on the Feast of Sts. Vartanank. Fr. Barthev gave a brief history on the challenges the Armenian people faced for 150 years from the time of the adoption of Christianity, focusing on threats from the Persian King Hazgerd for Armenians to renounce their faith. Fr. Barthev stressed that the Armenian people resoundingly refused to renounce their faith and through their martyrdom, preserved the faith and identity of our people. He continued, saying that the destiny of the Armenian people was not determined on the battlefield of Avarayr, but rather through the struggles and uprisings that followed and which culminated in the victory secured by General Vahan Mamigonian. In conclusion, he reminded the students that the battle of Sts. Vartanank is not a mere historical fact and has implications for our youth today. "As the descendents of Vartan, it is the obligation of our youth to follow in their example by adhering strongly to our faith and heritage, and preserving and promoting our religious and national values", concluded Fr. Barthev.

In his message, the Prelate exalted the heroism of General Vartan Mamigonian, Ghevont Yeretz, and their soldiers, who through their martyrdom demonstrated their loyalty and devotion to our faith and nation, and urged the students to embody the faithfulness of our martyrs in their own lives.

The students then received a tour of the headquarters, after which they were led to the reception room where during a meeting with the Prelate, they

were familiarized with the endeavors and mission of the Western Prelacy, Prelacy Schools, and of the North American Prelacies in general. The Prelate also answered questions presented by the students.

At the conclusion of the meeting, the Prelate presented the students and guests with a memento, *The New Testament and Psalms*, and urged them to enrich their minds and souls with daily readings from the Bible which the students promised to do.

The visit concluded with a group photo at the main entrance of the Prelacy, and the collecting singing of the Armenian national anthem.

\*\*\*

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐԹ ՅՈՒԿՎՈՒՄԻ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ



Նորթ Յուկվուտի Յայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ ծխական համայնքին հաստատման երկրորդ տարեդարձին առթիւ, Կիրակի, 27 Փետրուար 2011ին, հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցանեց Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, ուրարի տուչութիւն կատարեց եւ իր հայրական պատգամով խրախուսեց Նորթ Յուկվուտ

Եկեղեցւոյ հաւատացեալները: Սրբազանը նաեւ յաւարտ Սուրբ Պատարագին, ներկայ եղաւ Եկեղեցւոյ կից սրահին մէջ կազմակերպուած ընդունելութեան:

Առաջնորդ Սրբազանին այցելութիւնը տեղի ունեցաւ ծխական շրջանի հոգեւոր մատակարար Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեանի եւ հոգաբարձութեան հրաւերով, որոնք երկար աշխատանք տարած էին այս այցելութեան պատրաստութեան համար: Ս. Պատարագին, Ս. Սեղանին կը սպասարկէին Յայր Միւռն եւ սարկաւազներ:

Իր պատգամ քարոզին մէջ, Սրբազան Յայրը գոհութիւն եւ փառք վերառաքեց Աստուծոյ, որ գեղեցիկ այս առիթը ընձեռեց, Նորթ Յուկվուտի Յայց. Առաք. նորահաստատ Եկեղեցւոյ եւ ծխական համայնքին հետ աղօթակից ըլլալու: Ան մէջբերեց օրուան անետարանական հատուածի համարները, ուր Քրիստոս Տաղաւարահարաց տօնին վերջին օրը, ուխտաւոր հաւատացեալներուն կ'ըսէր. «Ով որ ծարաւ է, թող ինձի գայ եւ խմէ: Ով որ ինձի կը հաւատայ, անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին» (Յովհ. 7:37-38):

Քարոզի աւարտին, Առաջնորդ Սրբազանը սուրբ ուրարի տուչութիւն կատարեց եկեղեցւոյ դպիրներէն Պաղտիկ Էքմէքճեանին:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք եւ հաղորդութիւն: Ապա, հոգեհանգստեան արարողութիւն եւ մատաղօրհնէք կատարուեցաւ Նորթ Յոլիվուտի ՅՕՄի «Մեղրի» մասնաճիւղի ինչպէս նաեւ ՅՕՄի բոլոր հին եւ նոր ննջեցեալներու հոգիներու խաղաղութեան համար: «Պահպանիչ» աղօթքէն առաջ, երգուեցան «Կիլիկիա», «Ի վեհ բարձանց» եւ «Մեր Յայրենիք» մաղթերգները:

Յաւարտ Սուրբ Պատարագի, եկեղեցւոյ կից սրահին մէջ, եկեղեցասէր Տիկնանց Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն: Տիար Խաչիկ Թիթիզեան ողջունելէ ետք հիւրերն ու ներկաները, բեմ հրաւիրեց եկեղեցւոյ հոգեւոր Մատակարար՝ Գերպ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեանը: Բոլոր խօսք առնողները շնորհաւորեցին Նորթ Յոլիվուտի նորահաստատ ծխական համայնքը, բարձր գնահատեցին տարուող եկեղեցանուէր եւ կազմակերպչական աշխատանքները եւ հաստատեցին կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը Նորթ Յոլիվուտի շրջանէն ներս եկեղեցի եւ կազմակերպ համայնք ունենալու հրամայականին:

Առաջնորդ Սրբազանը, փակման իր խօսքին մէջ, գնահատեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Յայր Սուրբին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան նուիրեալ աշխատանքները: Վեր առաւ սարկաւագաց եւ դպրաց անդամ անդամուհիներու եկեղեցանուէր ծառայութիւնը եւ առհասարակ շնորհաւորեց Նորթ Յոլիվուտի հայ համայնքը, քոյր միութիւններն ու կազմակերպութիւնները, որոնք նեցուկ կանգնած՝ յառաջ կը տանին եկեղեցաշէն եւ աստուածահաճոյ աշխատանքները: Սրբազան Յայրը կոչ ուղղեց խօսքը գործի վերածելու եւ ստեղծուած խանդավառութեան գործնական ընթացք տալու հրամայականը:

Նորթ Յոլիվուտի Յայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հիմնադրութեան երկրորդ տարեդարձի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 18 Փետրուարի երեկոյեան, Նորթ Յոլիվուտի «Անուշ Օճախ» ճաշարանին մէջ:

Զեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Յօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ կազմակերպուած էր եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ:

## **EPISCOPAL DIVINE LITURGY IN CELEBRATION OF THE SECOND ANNIVERSARY OF THE NORTH HOLLYWOOD PARISH**

On Sunday, February 27<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and bestowed a stole upon an altar server to mark the second anniversary of the establishment of the North Hollywood Parish. Parish Pastor Very Rev. Fr. Muron Aznikian assisted at the altar.



Prior to his sermon, the Prelate first gave thanks to Almighty God for granting the opportunity for the parish community to come together to celebrate the joyous occasion of their second anniversary. The day's Scripture reading was from chapter 7 of the Gospel of John which portrays our

Savior Jesus Christ as the Living Water. John recorded this incident which occurred on the last day of a religious festival observed by the Jews which was known as the Feast of Tabernacles or the Feast of Booths. The Feast commemorated the deliverance of the nation of Israel from Egypt before they reached the Promised Land. People from all over the country would gather in Jerusalem for a week-long celebration of the Feast of Booths. The date of the Feast had been set hundreds of years earlier by God for two reasons; for His people to remember how He had cared and provided for them on their forty year journey by miraculously providing food, shelter, and water, and for them to remember and be thankful for their present harvest. He commanded His people to come to Him and celebrate with Him for He is a loving and bountiful Giver.

During the ceremony, people would go down to the Pool of Siloam to get water to take back to the altar as an offering to God and as a plea for Him to send enough water for the next harvest. However, this was more than a request for physical water. It was a cry for the spiritual drought that prevailed for hundreds of years, a cry for salvation and for His life-giving living water. It was in this atmosphere while saying prayers that Jesus' voice was heard saying, "If anyone thirsts, let him come to Me and drink. He who believed in Me, as the Scripture has said, out of his heart will flow rivers of living water" (John 7:37-38).

The Prelate urged the faithful to turn to Jesus for He is still the answer to our cries today and He is the source of the living water that our souls need. Our Lord Savior Jesus Christ has given us the promise that He will supply us bountifully and joyfully not just physical water but the life-giving Holy Spirit for the nourishment of our souls. If we believe in Jesus and trust in Him we never have to be thirsty again for He is the living water.

Following his sermon, the Prelate bestowed upon altar server Baghdig Ekmekjian the privilege of bearing a stole.

During the requiem service, prayers were offered for the souls of departed members of the ARS North Hollywood "Meghri" Chapter, and all ARS members. The service came to a close with the Prelate's benediction and the singing of the Cilician and Pontifical anthems, and the Armenian national anthem.



A reception organized by the parish Ladies Auxiliary followed at the church hall. Board of Trustees Chair Mr. Khatchig Titizian welcomed the guests, then invited Very Rev. Fr. Muron Aznikian for his remarks. All of the day's speakers congratulated the parish community on their progress and wished for the parish to have its own church in the near future to better serve the spiritual needs of the community.

The artistic program included performances by singers Mr. Levon Katerjian and Mr. Nshan Tchaghatsbanian.

In his message, the Prelate commended the Parish Pastor, Board of Trustees, Ladies Auxiliary, deacons, altar servers and choir members for their dedicated service, as well as local sister organizations and the faithful who lend their support to the advancement of the parish.

The second anniversary banquet was held on Friday, February 18<sup>th</sup> under the auspices of and with the presence of the Prelate. The banquet took place at Anoush Ojakh Hall in North Hollywood and was organized by the Parish Board of Trustees.

\*\*\*